



01.10.2011թ.

Գրավոր ժառանգությունը Հայաստանի վարկանիշն է

Մամուլի հաղորդագրություն

Այսօր «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը միացավ Հայաստանում մեկնարկող Եվրոպական ժառանգության օրերին՝ թանգարանի ներքին բակում կազմակերպված բնօրինակ 10 սեպագիր արձանագրությունների և սեպագրեր կրող 12 կավանոթների ցուցադրությամբ՝ իր համերաշխությունը հայտնելով Եվրոպայի մշակութային ժառանգության պահպանությանն ու խրախուսմանն ուղղված համաեվրոպական ջանքերին:

Բացելով միջոցառումը՝ «Էրեբունի» արգելոց-թանգարանի տնօրեն Գագիկ Գյուրջյանը մասնավորապես ընդգծեց այս տարի Օրերի համար ընտրված թեմայի կարևորությունը. ***հազարամյակների խորքից եկող գրավոր ժառանգությունը Հայաստանի վարկանիշն է և մենք պարտավոր ենք արժանավայել դիմավորել հայկական տպագրության 500-ամյակի տոնակատարություններն ու մեր սիրելի մայրաքաղաքի՝ 2012 թվականին Գրքի համաշխարհային մայրաքաղաքի միջոցառումները: Նա նաև նշեց, որ «Գրավոր ժառանգության ակունքներում. սեպագիր» խորագիրը կրող ցուցահանդեսը ընդառաջ է այդ 2 կարևոր ու պատասխանատու մշակութային իրադարձություններին:***

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ արտգործնախարարության Եվրոպայի խորհրդի հարցերով խորհրդական Արա Մարգարյանը՝ ներկայացնելով նախաձեռնության եվրոպական ուղերձը՝ Եվրոպան մշակույթի տարածք է, ապրելու, աշխատելու և ստեղծագործելու համար բարենպաստ տարածք, իսկ Եվրոպայի պատմամշակութային ժառանգությունը այդ աշխարհամասի բազմամիլիոն քաղաքացիների ընդհանուր ժառանգությունն է:

Արգելոց-թանգարանի հրավերքին արձագանքել և իր ներկայությամբ միջոցառումը պատվել էր Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Սիլվիա Ջեհեն: Ողջունելով ներկաներին՝ նա խոսեց նախաձեռնության հիմնադիր կազմակերպության՝ Եվրոպայի խորհրդի դերակատարության ու շարունակական ջանքերի մասին՝ Օրերի կայացման գործում: Տկն Ջեհեն նաև կատակեց, թե ինքն այսօր Էրեբունի է եկել գերմանական ազգային կոստյումով՝ փորձելով խրախուսել մշակութային բազմազանությունը և ճանաչելի դարձնել նաև գերմանական մշակույթը Հայաստանում:

«Գրավոր ժառանգության ակունքներում. սեպագիր» ցուցահանդեսը այցելուներին միաժամանակ ներկայացնում էր 5 մեծադիր պատառներ՝ գծելով գրավոր ժառանգության հետագիծը՝ մինչև էլեկտրոնային գիրք: Անցնելով պատառից պատառ այցելուն կարծես անցնում է պատմական մի ժամանակահատվածից մյուսը և մեկ անգամ ևս ըմբռնում գրի անգնահատելի նշանակությունը:

Ցուցահանդեսը կգործի մինչև 2011թ. նոյեմբերի 1-ը:

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան